

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՒՐԵԱՆ

# ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆԵԱՆԻ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Այս տարւայ մարտ 1-ին, Երեւանում, սրտի երկարատեւ հիւանսութիւնից, 70 տարեկան հասակում, վախճանեց նշանաւոր գիտնական ճարտարապետ թորոս թորամանեանը:

Հանդուցեալը Շալին - Գարահիսարի շրջանից էր, հողագործի զաւակ, ծնւած 1864 թ. մարտ 18-ին: Նախնական կրթութիւն ստացել էր գիւղի տէր - թողիկեան գործոցում: 1878 թ. զրկւել էր ծրանղներից, բայց կարողացել էր շարունակել ուսումը, երեւան բերելով առանձին ընդունակութիւն գծադրութեան մէջ: 1884 թւին համագլուղացիների եւ ազգականների աջակցութեամբ, թորամանեանին յաջողւեց անցնել Պոլիս եւ մի առ ժամանակ աշակերտութիւն անելով մի հիւսն արհեստաւորի մօմ՝ պատրաստեց մտնելու համար Գեղարւեստից ձեմարանը: 1888 թ նա փայլուն քննութիւն տևեց եւ ընդունւեց ձեմարան, ուր այն ժամանակ դասախոսում էին եւրոպացի եւ մի քանի հայ ու յոյն ուսուցչապետներ: Ձեմարանում թորամանեանը հինգ տարի հետեւեց ճարտարապետական ճիւղին, 1893 թ. աւարտեց փայլուն յաջողութեամբ՝ ստանալով պետական թոշակ՝ մասնագիտութիւնը Եւրոպայում կատարելագործելու համար: Վրա հասան, սակայն, հայկական հալածանքները, նշանակւած թոշակը մերժեց, եւ թորամանեանը, 1896 թւին, հետացաւ Պոլսից ու մինչեւ 1900 թ. դրազւում, էր ճարտարապետութեամբ Բուլգարիայում: Այսակ նրա գործերը զնացին բաւական լաւ. նա ոչ միայն օգնում էր իր ազգականներին, այլեւ անտեսում որոշ գումար, որով կարողացաւ անցնել Փարիզ՝ ուսումը շարունակելու յուսով: Փարիզում սակայն նրա յոյսերը չարգարացան. նիւթեական միջոցների պակասը և լեզւի անբաւարար ծանօթութիւնը արդելք եղան մտնելու բարձրագոյն դպրոց, և նա բաւականացաւ միայն դրազարաններում աշխատելով եւ թանգարաններ այցելելով: Բայց երկար չկարողանալով գիտմանալ՝ վերագարձաւ Բուլգարիա:

Փարիզում թորամանեանը ծանօթացաւ բանասիրութեամբ եւ հայկական հնութիւններով զբաղւող կար. Բասմաջեանի հետ, որ մասձում էր ճանապարհորդութիւն կատարել գէպի կովկաս՝ Անիի աւերակները ուսումնասիրելու համար: Այդ նպատակով նա գիմում էր արել հայ հարուսաներին, բայց վերջիններից շօշափելի արդիւնք չէր ստացւել: Նրան յաջողւել էր մի փոքր զումար էլ ձեռք բերել Société d'Asiatique-ից: Եւ համեստ միջոցներով նա մեկնեց Կովկաս՝ նախօրոք կանչելով եւ թորամանեանին՝ լրացնելու համար իր թիրին ճարտարապետութեան բնադաւառում: Թորամանեանը, ոգեւորւած Անիի ճարտարապետական արւեստն ուսումնասիրելու հետանկարից, թողեց դործը եւ շտապեց միանալ Բասմանեանին:

1902թ. Բասմանեանն ու թորամանեանը արդէն Անիումն էին: Բասմաջեանը ենթադրում էր Անիում մնալ մի քանի շաբաթ եւ այդքան ժամանակը բաւական էր համարում հայկական ճարտարապետութիւնը ուսումնասիրելու համար, մինչ թորամանեանը պնդում էր, թէ դրա համար անհրաժեշտ է երկար տարիների անդուչ աշխատանքը: Եւ որովհետեւ նրանց նիւթական միջոցները բաւական չէին երկար աշխատանքի համար, որոշում է, որ թորամանեանը մնայ Անիում, իսկ Բասմաջեանը գնայ Հայքնակ խոչոր կենտրոնները եւ դրամ հաւաքի թորամանեանի աշխատանքների համար: Մի քանի անյաջող փորձերից յետոյ, սակայն, Բասմաջեանը վերադառնում է Փարիզ, իսկ թորամանեանը մնում է Անիում, առանց նիւթական միջոցների:

Անիում թորամանեանը ենթարկեց Փիղիքտիկան եւ բարոյական ծանր զրկանքների: Նրան համեստ օգնութիւն էր ցոյց տալիս միայն կջմիածնի ներկայացուցիչ Միքայէլ վարդապետը, որ ինքն էլ հազիւ կարողանում էր դլուխ պահել: Նրանք երկուսը ապրում էին կիսաւերակ մի նկուղի մէջ, առանց վառելիքի, գրեթէ միայն չոր հացով: Սոված, ցնցոտի դարձած հագուստով՝ թորամանեանը անկարող եղաւ շարունակել սկսած աշխատանքը: Պատահական մարդկանց աջակցութեամբ նա կարողացաւ հասնել կջմիածին, բայց այստեղ նրա վիճակը ոչ միայն չբարելաւաեց, այլ, ընդհակառակը, աւելի եւս վատթարացաւ: կջմիածնի համալսարամնական միաբանները կասկածով ու հեղնանքով վերաբերեցին բարձրադոյն դպրոցի վկայականից զուրկ թորամանեանին, նրան կոչում էին «վարպետ», այսինքն՝ պարզ որմնադիր եւ միջոց չտվին աշխատելու:

Այդ այն ժամանակն էր, երբ Խաչիկ վարդապետ Դատեանը կատարում էր Զւարթնոցի պեղումները: Ներսէս Շինող կաթուղիկոսի

650 թւին կառուցած եկեղեցին ընդհանուրի հետաքրքրութեան առարկայ էր, և Խաչիկը փնտրում էր ձեռնհաս մէկին, որ կարողանար վերականգնել եկեղեցու յատակագիծը: Խաչիկի հրաւէրով թուրամանեանը անցաւ գործի եւ մի քանի լրացուցիչ պեղումներից յետոյ՝ զծեց եկեղեցու ճակատը եւ ներքին հատածները: Թորամանեանի յատակագիծով գուրս եկաւ երեք յարկանի կլոր մի եկեղեցի՝ զուտ հայկական գմբէթով: Այդ եկեղեցին շինող է. դարի հայ ճարտարապետների գաղտնիքն ու խիզախութիւնը ներքին երկու յարկերի կարգաւորման կիսաշրջանով շարւած նուրբ, գեղակերս սիւների եւ, ինչպէս ինքը Թորամանեանն էր որակում, ութը «յանդուդն» կամարների դաստորութեան մէջ էր:\*)

Երբ Խաչիկ վարդ-ը Թորամանեանի կազմած յատակագծերը ներկայացրեց վկայեալ ճարտարապետներին, որանք բոլորը լմբուտացան չէնքի երեք յարկանի լինելու մաքի գէմ եւ մերժեցին ընդունել հայկական գմբէթի գոյութիւնը: Խաչիկը շատ հեշտութեամբ լուծեց խնդիրը. նա առաւ ու մկրատով կտրեց գմբէթը: Բնականաբար, գրանից յետոյ, յարաբերութիւնները Խաչիկի եւ Թորամանեանի միջեւ խանգարւեցին, եւ վերջինս վերագարձաւ Անի, ուր 1904 թ. սկսած մասնակցեց Ակադ. Ն. Մառի կատարած պեղումներին:

Մառը 1892 թ. իվեր զբազւած էր Անիով: 1892 թ., Կայսերական Հնագիտական Յանձնաժողովի նախաձեռնութեամբ եւ միջոցներով նա սկսեց կատարել պեղումներ, որ շարունակեց եւ 1893 թ.: Տասը տարւայ դադարից յետոյ, 1904 թ. Մառը նորից ձեռնարկեց այդ աշխատանքներին՝ եւ այնուհետեւ տարւէ տարի շարունակեց մինչեւ պատերազմի վերջը: Այժմ արդէն աշխատանքները կատարւում էին բացառապէս հայ մշակութային հիմնարկութիւնների ու անհատների եւ գլխաւորաբար Պետքերուրդի Հայ Եկեղեցական Խորհրդի տրամադրած նիւթեական միջոցներով:

Աշխատելով Մառի հետ՝ Թորամանեանը ստացաւ որոշ նիւթեական ապահովութիւն եւ ամբողջապէս նւիրւեց իր սիրած գործին հայ եւ, յատկապէս, Անիի ճարտարապետութեան ուսումնասիրութեան: Թորամանեանի կեանքում սկսւեց մի նոր շրջան: Նա տեղ դտաւ ակադ. Մառին շրջապատող բարձր դարդացման տէր եւ գիտութեան անշահախինդրօրէն ծառայող մտաւորականների մէջ եւ ինքն էլ ամբողջ էութեամբ յանձնեւց գիտական հետազոտական աշխատանքի: Անին յաճախ ացելում էին հայկական հին ճարտարապետութեան առաջակարգ մասնադէտներ, որոնք կենդանի հե-

\*) Տե՛ս Թ. Թորամանեանի յօդւածը, «Մուրմ», 1905 թ. № 5:

տաքրքրութիւն էին ցոյց տալիս դէպի Թորամանեանի գործերը, վիճում էին նրա հետ, հաղորդում ու բացատրում զիտութեան կատարած նւաճումները այլ բնագաւառում : Բնական է, որ նման միջամայրում Թորամանեանը բոլորովին վերածնէր : Մառը խիստ բարձր էր դնահատում նրա բժանագիր աշխատանքը, հետը առնում էր հայկական աւելակներն այցելելիս, շատ անդամ նրան մենակ ուղարկում էր որոշ եկեղեցիների հետազօտութեան՝ չափելու եւ քըննելու համար : Վերջապէս, իր հետ տարաւ նրան Վրաստան, ուր Թորամանեանը հնարաւորութիւն ստացաւ ծահօթանալու վրաց ճարտարապետութեան եւ հաւաքելու հարկաւոր տեղեկութիւններ : Երեք տարւայ լարւած աշխատանքից յետոյ, Թորամանեանից դուրս եկաւ ըստ ամենայնի զիտնականօրէն պատրաստւած մի հնագէտ ճարտարապէտ :

1906 թւին Մառը պեղեց Գագիկ Ա. Թագաւորի Ժ. դարի վերջը շինած եկեղեցին : Ժամանակակիցների վկայութեամբ այդ եկեղեցին Զւարթնոց եկեղեցու հարազատ պատճէնն էր : Պեղումները լիովին հաստատեցին այս վերջին փաստը : Նրանք հաստատեցին նաև, որ Թորամանեանի կազմած եւ Խաչիկի կողմէից այնպիսի բարբարոս վերաբերումի արժանացած Զւարթնոցի յատակագիծը ըստ ամենայնի ճիշտ էր, նոյնիսկ ճակատի նկարը ճշտեց ամբողջութեամբ : Բացի ճարտարապետական նիւթից, որ հնարաւորութիւն էր տալիս վերականգնելու Գագիկ Ա.-ի եկեղեցու յատակագիծը, պեղումների ժամանակ գտնեց եւ եկեղեցին շինողի արձանը՝ եկեղեցու կալապարը Ճեռքին : Այդ կաղապարի վարի մասը՝ առաջին երկու յարկերը մընացել էին անեղծ, որով ճշդեց, որ Թորամանեան վերականգնած Զւարթնոցի յատակագիծը բոլորովին համապատասխանում էր իրականութեան, մի հանգամանք, որ շատ բարձրացրեց Թորամանեանի վարկը, իբրեւ հայ հին ճարտարապետութեան մասնագէտի :

Անի համնելու առաջին օրից իսկ Թորամանեանը յատուկ ուշադրութիւն դարձրեց Ժ. դարում շինւած Առաքելոց եկեղեցու վրա, որ համարւում էր Կաթուղիկէ մայր եկեղեցի : Իր մեծ մասով նամնացել էր գետնի երեսին եւ մատչելի էր գիտելու եւ չափելու համար : 1906 թ. Մառը այդ եկեղեցու շուրջը կատարեց հետախուզական աշխատանքներ, որոնք Թորամանեանին տւին խիստ հետաքրքրական տեղեկութիւններ եկեղեցու մեծութեան եւ յատակագիծ մասին : Միեւնոյն ժամանակ, Թորամանեանը հետազօտեց ու չափեց կցմիածնի մօտի Հոլիսիմէի եկեղեցին՝ շինւած 619 թ. եւ Մցլսեթի վրաց Ա. Խաչ եկեղեցին, որի շինութիւնը սկսել էր 600 թւականներին եւ վերջացել 619-ին :

Այս աշխատանքները թորամանեանին ստիլեցին մտածել Հայաստանի հնագոյն եկեղեցիների տիպի մասին։ Եւ նա եկաւ այն եղբակացութեան, որ Հայաստանի ամենահին եկեղեցու տիպ պէտք է համարել իջմիածնի տաճարը, որ սկզբնապէս կոչում էր Սուրբ Կաթողիկէ եկեղեցի, առաջ՝ Շողակաթ եւ, վերջապէս իջմիածնի։ 1908 թ. նա տեղափոխւեց իջմիածնին եւ որոշեց զբաղւել Հայ հնադրյն եկեղեցիների կտառուցւածքի խնդրավ։

Նոյն ժամանակ, թորամանեանի կեանքում տեղի ունեցաւ մի դէպք, որ զգալապէս բարւոքեց նրա գիրքն ու նշանակութիւնը։ Ակադ. Մաոր, զատելով թորամանեանի ամենից աւելի հետաքրքրական աշխատութիւնները, մի յանձնաբարական զրութեամբ ներկայացրեց Ռուսաստանի Գիտութեանց ձեմարանին, որ այդ աշխատութիւնները քննելու համար կազմեց գիտնականների մի յանձնախումբ։ Այդ յանձնախմբի մէջ մտաւ նաև քրիստոնէական գեղարվեստի հռչակաւոր մասնապէտ ակադ. Ն. Կոնդակովը, որ խիստ նպաստաւոր վկայութիւն տվեց թորամանեանի զործերի մասին՝ բնդզելով նըրանց կարեւոր արժէքը Արեւելքի քրիստոնէական արևեստի պատմութեան համար եւ պնդելով նրանց չուտափոյթ հրատարակութեան անհրաժեշտութեան վրա։

Համաշխարհային հռչակ վայելող գիտնականի այդքա՞ն քաջալերական կարծիքը չէր կարող չողեւորել թորամանեանին եւ, բնականաբար, պիտի անդրադառնար նրա գիրքի վրա։ Այժմ իջմիածնում նա այլեւս «վարպետ» չէր, այլ զիտնական հնագէտ – ճարտարապետ։ Ապրում էր Գարեգին վարդ։ Յովհէմեանի մօտ։ Նրա առջեւ բաց էին բոլոր դաները։ նա հնարաւորութիւն ունէր աշխատելու լաւագոյն պայմաններում։

Իջմիածնում թորամանեանը աշխատեց Հայ հնագոյն եկեղեցու տիպի պարզաբանման վրա։ Այս նպատակով նա մանրազնին հետազօտութեան ենթարկեց իջմիածնի տաճարը եւ ուսումնասիրեց նրա շինութեան եւ բազմաթիւ վերակառուցւածների ու նորոգութիւնների պատմութիւնը՝ սկզբից մինչեւ նորագոյն ժամանակները։ Այդ ուսումնասիրութիւնների հիման վրա Թորամանեանը յանդեղ այն եղբակացութեան, որ իջմիածնի տաճարը իր ներկայ ձեւով պահել է հնագոյն եկեղեցու հիմնական մասները։ Իր այդ եղբակացութիւնը հիմնաւորեց հետեւեալ փաստերով։

Յիշեցնենք այսուեղ մի քանի խօսքով այդ պատմութիւնը։

Ըստ աւանդութեան, իջմիածնի եկեղեցին չինւած է 303 թ. Գրիգոր Լուսաւորչի եւ Տրդատ թագաւորի կողմից, ուրեմն, Հայերի քրիստոնէութիւն ընդունելու շրջանում։ Յամենայն դէպս, հինգերի քրիստոնէութիւն ընդունելու համար այս հիմնային դէպս, հին-

գերութ զարի կէսին նա արդէն գոյութիւն ունէր : Շինւած է այն տեղը, ուր Փրկիչը երեւաց Սուրբ Լուսաւորչին շողակաթ սիւնի ձեւով, ընկերակցութեամբ գւարթուն հրեշտակների : Սկզբնապէս հայոց կաթուղիկոսների աթոռը գտնւում էր էջմիածնում, բայց արդէն 452 թ. փոխագրւեց Դւին . այնտեղից 10-րդ դարում անցաւ Շիրակ՝ առաջ Արդինա, ասլա՝ Անի եւ, վերջապէս, Կիլիկիա, որտեղից միայն 15-րդ դարում վերադարձեց Հայաստան, ուր 1441 թ. վերականգնեւեց էջմիածնի տաճարը : Կաթուղիկոսական աթոռի հեռանալուց յետոյ էլ, էջմիածնը հայոց աչքին մնաց որպէս գլխաւոր լրապայը :

Էջմիածնի տուածին յայտնի վերաշինութիւնը տեղի է տնօցել 7-րդ դարում, Կոմիտաս կաթուղիկոսի օրով (617-625), երբ վայրեայ կառւը փոխարինեց քարով եւ այդ ասթիւ հաստատեցին պատեղը եւ հաւանաբար ուրիշ աւելի կարեւոր փոփոխութիւններ էլ կատարեցին : 20 տարի անցած ինչ որ վերաշինական աշխատանք-կատարեցին, կատարել եւ ներսէս վերաշինող կաթուղիկոսը : Թորամաններ է կատարել եւ ներսէսի կատարած եղել է լուրջ վերաշինութիւն, մի րան, որ այնքան էլ հաւանական չէ, որովհետեւ նախ՝ կոմիտասի կատարած վերաշինութիւնից յետոյ շատ քիչ ժամանակ էր միտասի կատարած վերաշինութիւնից շատ քիչ ժամանակ էր, անցել եւ երկրորդ՝ ներսէսը գրաւած էր Զւարթոնցի շինութեամբ, անցել եւ երկրորդ՝ ներսէսը գրաւած էր էջմիածնը, եւ հազիւ թէ ժառանքի կարծիքով պիտի վերազանցէր էջմիածնը, եւ հազիւ թէ ժառանքի կարծում էր պիտի վերազանցէր էջմիածնը :

Թէեւ էջմիածնի տաճարը, պատմութեան ընթացքին, յաճախ ենթարկել է աշխարհականների աւելածութեան, բայց յայտնի է, ենթարկել է անդամներ ենթարկում է մասնակի վերաշինութեան անդամների անդամների անդամներ ենթարկում է մասնակի վերաշինութեան անդամների անդամներ ենթարկում է մասնակի վերաշինութեան, բայց արտաքին կերպարանքը, ինչ-նութեան եւ ձեւափոխութեան, բայց արտաքին կերպարանքը, նոր նոր եկեղեցի:

Թորամաննեանը բոնեց Դոեօւ-ի կողմը եւ Առաքել Դաւրիժեցու պատմութեան հիման վրա ցոյց տեղ, որ Շահ Արքասը միայն 15 քար է տեղափոխել Սպահան, իսկ էջմիածնի տաճարը մնացել է

կանգուն :<sup>4)</sup>) Այս տւեալների հիման վրա Թորամանեանը անում է հետեւեալ խորհրդածութիւններն ու եղբակացութիւնները :

Յայտնի է, որ Անիի Առաքելոց եկեղեցին կաթուղիկէ եկեղեցի էր եւ շինւած էր 10-րդ դարում Դւինի կաթուղիկէ եկեղեցու օրինակով : Այս վերջինն էլ, իր հերթին, Թորամանեանի հնթագրութեամբ, շինւած էր կջմիածնի տաճարի օրինակով : Անիի եկեղեցին դրսից քառանկիւնի էր . քառանկիւնի պէտք է եղած լինէր եւ նրա նախատիպը : Միւս կողմէց, դոյտութիւն ունի Մցիւթի վրաց Ս. Խաչ եկեղեցին, որ նոյնպէս կաթուղիկէ էր եւ զարմանալի կերպով նըման կջմիածնի մօտի Ս. Հռիփախմէի եկեղեցուն : Վրաց եկեղեցու շինութիւնը վերջացել էր 619-ին, իսկ Հսիփսիմէի եկեղեցին սկսել էր շինւել նոյն թւականին . սրանից Թորամանեանը եղբակացնում է, որ այդ երկու եկեղեցիներն էլ շինւած են մի երրորդի, այսինքն՝ կջմիածնի օրինակով :

Մառը տւեց Թորամանեանին եւ այս առեղծւածի լուծումը . Ս. Խաչ եկեղեցին շինւել է վրաց կիրիոն կաթուղիկոսի օրով, որ, հաւանարար, վճռական ձայն է ունեցել եկեղեցու տիպը որոշելու հարցում : Այս այն կիրիոնն է, որ առաջնակարգ գեր ունեցաւ հայ եւ վրացի եկեղեցիների բաժանման խնդրում եւ որ վրաց կաթուղիկոս դառնալուց առաջ, 7 տարի, եղել էր կջմիածնի տաճարի աւագերէց : Բնական է, որ երր նա ձեռնարկեց Վրաստանի կաթուղիկէ եկեղեցու շինութեան, իրրեւ նախատիպ բնդունեց կջմիածնի եկեղեցին : Այն էլ պէտք է ասել, որ հայերի եւ վրացիների գեղարւեստական ճաշակը, ինչպէս եւ բաղմաթիւ կրօնական աւանդութիւններ ու սովորութիւններ չատ նման էին միմեանց եւ եկեղեցիների բաժանումից յետոյ էլ գեռ երկար մնացին նման : Այդ նմանութիւնը մանաւանդ աչքի է ընկնում շինարարութեան բնագաւառում, որովհետեւ վրաց եկեղեցիներից շատերը, եթէ ոչ մեծ մասը, շինւած են հայերի ձեռքով :

Նախնական այս հատղօտութիւններով եւ տեսական հիմնաւորումներով գոտեպնդւած՝ Թորամանեանը ձեռնարկեց կջմիածնի տաճարի ուսումնասիրութեան : Նա դրսից ու ներսից ամենայն մանրամասնութեամբ չափեց եկեղեցին, հանգամանօրէն քննեց պատերի եւ հիմքի մատչելի մասերի կառուցւածքը եւ հանեց մի շարք եղբակացութիւններ, որոնցից իւրաքանչիւրը ի միհակի էր հաստատելու

\* ) Առ. Գաւրիմեցին (էջ 201) առաջ է թերում Շահ Աքբարի եւ Զուլայիցի հայ վաճառական Խոջա Նազարի խօսակցութիւնը, որի ժամանակ վերջինս աշխատում էր համոզել Շահին, որ առ նոր եկեղեցի շինել տայ առանց հիմք բանդելու :

կատարած գիտողութիւններով։ Եւ ամենայն ճշտութեամբ ապացուցեց, որ տաճարը նախապէս եղել է քառանկիւնի շէնք, որ եկեղեցւն խաչի ձեւ տևող կողքի թեւերը հետագայ ժամանակների, այսինքն՝ 7-րդ դարի գործ էն։ (Մասը հասցնում է մինչեւ 9-րդ եւ նոյնիսկ 10-րդ դարը)։

Թորամանեանի երկրորդ, նոյնպէս շատ կարեւոր եզրակացութիւնն այն է, որ հակառակ արտաքին քառանկիւնի ձեւին՝ եկեղեցին ներսից ունէր խաչի ձեւ։ Ս. Հոփիսիմէի, Մցիւթի Ս. Խաչի եւ Սնիի Առաքելոց եկեղեցիների պէս։ Այս խաչաձեւութիւնը առաջ էր դալիս նրանից, որ եկեղեցու չորս անկիւնները ունէին չորս սենեակներ, որոնք իրենց մէկ անկիւնով կցւած էին զմբէթը պահող չորս սիւններին։ Այս չորս սենեակներն էլ ունէին արտաքին դուռ։ Արեւելեան սենեակների գերը պարզ է։ Նրանք կատարում էին խորանի պաշտօն։ արեւմտեան սենեակնը, որ զուրկ էին եկեղեցու ներսի հետ հաղորդւելու հնարաւորութիւնից, Թորամանեանի ենթագրութեամբ, ծառայում էին նորահաւատների համար («Երախայ», «նորահաւատ»), որոնք, օրինակ, յոյն եւ լատին եկեղեցիներում, հաղորդութիւնից առաջ, գուրս էին գնում, իսկ հայոց եկեղեցում մնում էին առանձին սենեակում։ Իր ենթագրութիւնը հաստատելու համար Թորամանեանը օրինակ է բերում իր ծննդավայրի Ս. Աստւածածին եկեղեցին, ուր նոյնպէս կան արեւմտեան սենեակներ, որոնք եկեղեցոց բաժանւած են վանդակաձեւ պատերով։ Ժողովուրդը այդ սենեակները կոչում էր՝ բէյնամազ սէֆիսի։ Թորամանեանը ցոյց է տալիս, որ էջմիածնի տաճարն էլ ունեցել է նման սենեակներ։ Տաճարի արեւմտեան պատում նա յայտնագործել է զրսից գէպի սենեակը տանող մի գուռ։ Հետագային, երբ սենեակը վերացել է, գուռը ծածկւել է քարերով։ Այդ գուռը պայտաձեւ էր, որ ցոյց է տալիս թէ պատը շինւած է եղել 6-րդ դարից առաջ, որովհետեւ յայտնի է, որ արարների Հայաստան գալուց յետոյ եկեղեցիների շէնքերից անհետանում են պայտաձեւ գոները։

Հաստատելով հայոց հնագոյն եկեղեցու արտաքին ձեւն ու ներքին յատակագիծը՝ Թորամանեանը զբաղւեց նաև էջմիածնի տաճարի կտուրով։ Նրա կարծիքով սկզբում կտուրը իջնում էր եկեղեցու երկու կողմէրը։ Հետագային կտուրի այդ ձեւը նկատել է անյարմար, տանիքը ծածկւել է եկեղեցու առանցքից մէկ կողմ իջնող նոր ծածկով։ Այս ենթագրութեան ճշտութիւնը հաստատեց եւ ծերունի Սուրբիան եղ. Պարզեանը՝ պատմելով, թէ ինքը լսել է Մակար կաթողիկոսից, որ ոռու - պարսկական պատերազմի ժամանակ, 1828-ին, էջմիածնի զբաւելու ու բերդի էր վերածւել ուռու-

ների կողմից : Տաճարի տանիքի վրա միշտ կանգնած էին պահակ զինուորներ, որոնք, ցւտից պաշտպանւելու համար, յաճախ կրակ էին վառում : Դրանից վնասւել էր կառւրը : Երբ, պատերազմից յետոյ, ձեռնարկեցին կառւրի վերանորոգութեան եւ սկսեցին փոխել քարերը, պարզեց, որ վերի ծածկի տակ դոյցութիւն ունի մի երկը բորդ, բոլորովին տարբեր ձեւի ծածկ : Այդ ծածկի մէջ երեւան են եկել գաղտնի պահարաններ, որոնց մէջ գտնւել են եկեղեցական անօթներ եւ կաթողիկոսական գաւազան :

Այս օրինակները, կարծում ենք, բաւական են ցոյց տալու համար, թէ Թորամանեանը որպիսի ուշադրութեամբ, ինչ խնամքով, սրամտութեամբ ու սիրով աշխատում էր եւ ինչպէս յաջողում էր տրամարանական ու ճիշտ եղբակացութիւններ հանել տարբեր, յաճախ, ցան ու ցիր, իրարից կորւած փաստերից ու գիտողութիւններից :

Անփում եւ էջմիածնում կատարած 16 տարւայ աշխատանքի ընթացքում Թորամանեանը գիտեց առատ հում նիւթ - նկարներ, յայտագծեր, չափածքներ, գծագրութիւններ, բացատրական գրւածքներ, յուշագրութիւններ, օրագրութիւններ եւայլն : Հայ նիւթական մշակոյթի համար անդնահատելի նշանակութիւն ունեցող այդ նիւթի մէկ չնչին մասն է միայն ցարդ հրատարակւած : 1913 թ. յայսնի գիտնական Ստրժիկովսկու հրաւերով նա մէկնեց Վիէննա, ուր մի շարք գասախօսութիւններ կարդաց համալսարանի կից Արեւելեան ճարտարապետութիւնների ուսումնասիրութիւնների համար կազմած հաստատութեան մէջ : Այդ գասախօսութիւնները գրաւեցին գիտնական աշխարհի ուշագրութիւնը, եւ յիշեալ հաստատութիւնը Թորամանեանին յատկացրեց այդ տարւայ մրցանակը, յանձն առնելով միաժամանակ՝ ալպահովել նրա աշխատութիւնների հրատարակութիւնը : Իր աշխատութիւնները ամբողջացնելու նպատակով լրացուցիչ հետազոտութիւններ անելու համար Թորամանեանը հետի նիւթերը թողնելով Վիէննայում, վերադարձաւ Հայաստան եւ պատերազմի պատճառով այլեւս չկարողացաւ յետ գնալ Վիէննա : Միքանի տարի յետոյ, Ստրժիկովսկին ինքը օգտագործեց Թորամանեանի նիւթերը եւ հրատարակեց իր յայտնի երկհատոր աշխատութիւնը :

Պատերազմի ընթացքին Թորամանեանը շարունակեց աշխատել Հայաստանում : Թիւրքական արշաւանքը մէծ հարւած հասցրեց նըրան : Անին մի անգամ եւս կործանւեց . տարիների անդուլ ճիշերով հաւաքւած նիւթերը ցան ու ցրիւ եղան ու փճացան : Թորամանեանն էլ, շատերի հետ կորցնելով իր ունեցածը, փախաւ Թիֆլիս,

ուր մի առ ժամանակ ապրում էր ազգային հաստատութիւնների եւ մասնաւոր անհատների աշխալցութեամբ։ Երբ 1918 թ. կազմւեցաւ Հայաստանի Հանրապետութիւնը եւ քիչ յետոյ հնարաւորութիւն ստեղծեց հետազօտական - դիտական աշխատանքներ կատարելու, Թորամաննեանը շտապեց Հայաստան եւ պաշտօնի կոչեց հանրային կրթութեան եւ արևեստի նախարարութեան Հնութեանց Պահպանութեան կոմիտէց։ Այդ կոմիտէի կազմի մէջ մտնում էին Ակադ. Ա. Թամաննեանը, Գարեգին Արքեպ. Յովսէփեանը, Աշխարհքէդ Լորու - Մելիք - Քալանթարեանը։ Կոմիտէի հետաքրքրութեան եւ զբաղումի առաջին առարկաներից մէկը եղաւ Անին։ Թորամաննեանի գեկուցման վրա՝ Հնութեանց Պահպանութեան կոմիտէին յատկացւեցին լքեալ Անի գիւղի հողերը. գիւղը դարձաւ Անիի Հնութիւնների պահպանութեան կենտրոն, եւ Թորամաննեանը հաստատեց այնտեղ։ 1920 թ. յուլիսին կոմիտէն կազմակերպեց գիտական մի մեծ արշաւ, որին մասնակցեց եւ Թորամաննեանը, ինչպէս նաև Նկարիչ Եղիշէ Թաղէսուեանը, «Գեղարվեստ»-ի խմբագիր Գ. Լեռնեանը, Գարեգին Էպ. Յովսէփեանը, Աշխարհքէդ Մելիք - Քալանթարեանը եւ ուրիշներ։ Թիւրքական նոր արշաւանքը, վերջ դրեց այս ձեռնարկին էլ, ինչպէս և Հայաստանում սկսած ուրիշ շատ արժէքաւոր ձեռնարկների։

Խորհրդայնացման հետեւանքով գիտական աշխատանքները Հայաստանում մի առ ժամանակ կանգ առեն։ 1923 թին կազմւեց Հայաստանի Հնութիւնների Պահպանման կոմիտէն։ Թորամաննեան դարձաւ նրա գործօն աշխատակիցներից մէկը։ Յետոյ, նշանակւեց Պետական Թանգարանի ճարտարապետական բաժնի վարիչ եւ, ի վերջոյ, Հայաստանի կուլտուրայի Պատմութեան ինստիտուտի նախագահութեան անդամ։ Եւ այլեւս մինչեւ մահ աշխատեց Հայաստանում, իրեն հարազատ ասպարէզում։

Թորամաննեանի աշխատութիւններից այսուեղ յիշենք «Զւարթնոց»-ը, «Հայ Ճարտարապետութեան Պատմութիւնը», «Շինանիւթերը եւ շինարեւեստը Հայ ճարտարապետութեան մէջ» գրքերը, ինչպէս նաև «Նիւթեր Հայ ճարտարապետութեան պատմութեան» ապէս նաև «Նիւթեր Հայ ճարտարապետութեան պատմութեան» ապաջին հատորը՝ Թորամաննեանի սմենից խոշոր աշխատութիւնը։

Թորամաննեանի դերն ու նշանակութիւնը, ի հարկէ, այն չէ, որ նա բազմաթիւ հում նիւթեր հաւաքեց - չափածքներ, նկարներ ու պատկերներ։ Այդ էլ, անշուշտ, խիստ կարեւոր զործ է, բայց նրա մէջ չկայ այն ստեղծագործական տարրը, որ մարդուս անմահութեան է առաջնորդում։ Թորամաննեանի արժէքը այն է, որ նա կարողացաւ տեսնել ու հասկանալ տեղական յուշարձանների փոխակարողացաւ տեսնել ու հասկանալ տեղական յուշարձանների փոխա-

Դարձ կապը եւ սերտ յարակցութիւնը շրջապատի նոյն կարգի նիւթերի հետ։ Նա կարողացաւ հանել երբեմն յանդդնութեան հասնող համարձակ եզրակացութիւններ։ Եւ սուզծեց որոշ, իրապաշտ ուղղութիւն հայ ճարտարապետութեան պատմութեան մէջ։

Թորամանեանը սովորեց կարդալ պատմութիւնը քարերի վրա եւ ստիլեց գորչ քարերին խօսել Հայաստանի դարաւոր անցեալի մասին։ Թորամանեանը մեղ էլ սովորեցրեց լսել ու կարդալ Հայաստանի քարերի լեզուն։ Նա առաջին ուսուցիչն է մեր քարեղին լեզւի։ Այսուղ է նրա մեծութիւնը։ Եւ դրա համար նա արժանի է հայ մտաւորական հասարակութեան երախտագիտութեան։

Փարփա.

